ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/1221-24առ 04 06 2024թ.

«Մաքս Շին» ՍՊԸ
տնօրեն
Վ. Պետրոսյանին

(№ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-59/23-01/059 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար գործիքների, գործիքային հատուկ հարմարանքների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-59/23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի փետրվարի 6-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-59/23-01/059 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում»:

Քանի որ Պայմանագրի Հավելված 1-ի 27-րդ չափաբաժնում ներկայացված մամլակը չի մատակարարվել և առաջնորդվելով պամանագրի դրույթներով՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 6-ին կնքված №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-59/23-01/059 պայմանագիրը 27-րդ չափաբաժնի մասով և առաջարկում ենք «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (18 000 ՀՀ դրամ) և որակավորման (27 000 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91